



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

« 11 » « Տարգր » 20 ²⁰թ. № 107-Ղ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել ծառայողական քննություն «Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական հասարակական կազմակերպության կողմից հարցմամբ պահանջվող տեղեկությունը չտրամադրելու դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝

1) Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կադաստրի վարման և մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ Ա. Շահնուբարյանի կողմից «Ինֆորմացիոն կոմիտե» հասարակական կազմակերպության 2019 թվականի դեկտեմբերի 11-ի N Ի 110/19 և 2019 թվականի դեկտեմբերի 24-ի Ի 124/19 հարցումներին սահմանված կարգով և ժամկետում չպատասխանելու պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝

- 1) Աշոտ Ավայան - Գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,
- 2) Նաիրա Ալավերդյան - Քարտուղարության պետ,
- 3) Արմինե Հովհաննիսյան - Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 15 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունը անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

3/11/2020

X 

ՎԱՀԵ ԶԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

« 11 » մարտի 2020թ.
ք. Երևան